

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿՈՆՅՈՒԿՏՈՒՐԱՅԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Ժամանակակից տնտեսագիտության մեջ մշակվում են բաց տնտեսության կոնյուկտուրայի մոդելներ և տեսություններ, ինչպես նաև ազգային տնտեսության վրա միջազգային կոնյուկտուրային տատանումների ազդեցության մեխանիզմները: Այս թեմայով հետազոտությունների զգալի մասն իրականացվում է ԱՄՆ-ի տնտեսագիտական հետազոտությունների Ազգային բյուրոյի «Տնտեսական տատանումներ և աճ» ծրագրի շրջանակներում: Նմանօրինակ հետազոտություններ են իրականացնում նաև Համաշխարհային տնտեսագիտության ինստիտուտը (ք.Կիլ, Գերմանիա), Արժույթի միջազգային հիմնադրամը (ԱՄՀ), ինչպես նաև մի շարք հայտնի հեղինակներ: Վերջիններիս թվում են Գ.Գրինվալդը, Ջ.Ստիգլիցը¹, Ռ.Դորբուշը², Ֆ.Կիդլանդը, Է.Պրեսկոտը³, Մ.Օբստֆելդը, Կ.Ռոգոֆֆը⁴, Զ.Պլոսսերը⁵ և այլն: Մասնավորապես, Ֆ.Կիդլանդը և Զ.Պլոսսերը առաջին անգամ տնտեսագիտության մեջ մշակեցին տնտեսական պարբերաշրջանների մոդելը, կառուցված մակրոտնտեսական հիմքերը և հավասարակշռության ընդհանուր տեսության հիման վրա, որն էլ հետագայում հիմք հանդիսացավ կոնյուկտուրային ժամանակակից տեսության համար: Ռ.Դորբուշը⁶, Գ.Գրինվալդը և Ջ.Ստիգլիցը⁷ կիրառում էին նոր քայնական մոտեցումը բաց տնտեսությունում կոնյուկտուրայի վերլուծության համար, ապացուցելով, որ, ի տարբերություն Ֆ.Կիդլանդի մոտեցումների, կոնյուկտուրայի տատանումներն ի հայտ են գալիս ոչ միայն առաջարկի գործոնների «ուժով», այլ նաև՝ պահանջարկի միջոցով, որի պատճառով տնտեսական համակարգի ինքնակարգավորման անկատարությունն է:

Կ.Ռոգոֆֆը և Մ.Օբստֆելդը⁸ ստեղծեցին բաց տնտեսության կոնյուկտուրայի ժամանակակից տեսության միասնական տեսական հիմնավորումը, ցույց տվեցին կայունացնող կոնյուկտուրային քաղաքականության հիմնական ուղղությունները բաց տնտեսության պայմաններում:

Ազգային տնտեսության կոնյուկտուրան դիտարկվում է որպես տնտեսական համակարգի սուբյեկտների խմբերի տնտեսական ակտիվության տատանումներ, որոնք առաջանում են տնտեսական անհավասարակշռության հետևանքով և արտացոլում են տնտեսական աճի և/կամ սոցիալ-տնտեսական զարգացման դինամիկան և արտահայտվում են մակրոտնտեսական անհավասարակշռությունը բնութագրող համաժառն առաջարկի և համախառն պահանջարկի հիմնական քաղաքականության անհավասարակշռությամբ⁹:

Միջազգային տնտեսական հարաբերությունների ինտենսիվացումը, որն արտահայտվում է համաշխարհային տնտեսության գլոբալացման և ինտեգրման գործընթացներում, հանգեցնում է տնտեսությունների բացության աստիճանի մեծացմանը, ինչպես առևտրային և ընթացիկ գործառնությունների, այնպես էլ՝ կապիտալ գործառնությունների և աշխատուժի միջազգային շուկաների փոխկապվածության աճի գծով: Այս գործընթացի որակական ուժգնացում տեղի ունեցավ 20-րդ դարի 70-ական թթ., երբ սկսեց կտրուկ աճել տնտեսությունների բացության աստիճանը, ինտեգրացիոն գործընթացները բերեցին լիարժեք տնտեսական և առևտրային միությունների ստեղծմանը (ներառյալ նաև բացության ավելացումը աշխատուժի հոսքերի համար), լողացող արժույթային փոխարժեքների ռեժիմների ներդրումը հանգեցրեց արժույթային և առևտրային ոլորտներում փոխկապվածության ուժեղացմանը¹⁰: Այս ժամանակաշրջանը բնութագրվում է համաշխարհային ճանաչողության մի քանի տնտեսական ճգնաժամերով, ընդ որում, դիտարկվում է ժամանակի ընթացքում ճգնաժամերի՝ ըստ երկրների և երկրների խմբերի տարածման էմպիրիկ փաստը, այսինքն, տնտեսական ճգնաժամերի միջազգային բնույթը¹¹:

¹ Greenwald G. Keynesian, New Keynesian and New Classical Economics / G. Greenwald, J. Stiglitz // National Bureau of Economic Research Working Paper. 1987, N2160.

² Dornbush R. From Stabilization to Growth // National Bureau of Economic Research Working Paper. 1992, N02.

³ Kydland F. Business Cycles: Real Facts and a Monetary Myth / F. Kydland, E. Prescott // Quarterly Review of Federal Reserve Bank of Minneapolis, 1990, Vol 14, N2, P. -18.

⁴ Obstfeld M. Foundations of International Macroeconomics / M. Obstfeld, K. Rogoff. 4-th ed. Massachusetts: Massachusetts Institute of Technology, 1999, P. 44-69.

⁵ Plosser C. Understanding Real Business Cycles // Journal of Economic Perspectives, 1989, Vol. 3, N3, P. 51-77.

⁶ Dornbush R. From Stabilization to Growth // National Bureau of Economic Research Working Paper. 1992, N02., էջ 3:

⁷ Greenwald G. Keynesian, New Keynesian and New Classical Economics / G. Greenwald, J. Stiglitz // National Bureau of Economic Research Working Paper. 1987, N2160., էջ 34-38:

⁸ Obstfeld M. Foundations of International Macroeconomics / M. Obstfeld, K. Rogoff. 4-th ed. Massachusetts: Massachusetts Institute of Technology, 1999, P. 44-69.

⁹ Осипов Р.Д. Конъюктура малой открытой экономики // Вестник БГЭУ, 2004, N2, стр. 13.

¹⁰ Schmitt-Grohe S. The International Transmission of Economic Fluctuations // Journal International Economics, 1998, Vol. 44, N2, P. 259-260.

¹¹ Backus D. International Real Business cycles / D. Backus, P. Kehoe, F. Kydland // Journal of Political Economy. 1992. Vol. 100, N4, P. 753.


Հաշվի առնելով այն, որ ճգնաժամը համարվում է տնտեսական կոնյուկտուրայի ժամանակավոր բնութագրերից մեկը, գիտության մեջ, սկսած Ֆ.Կիդլանդի աշխատություններից¹, սկսեցին մշակվել միջազգային և համաշխարհային կոնյուկտուրայի տեսություններ և մոդելներ:

Էմպիրիկ իմաստով, միջազգային կոնյուկտուրայի առկայությունը արտացոլվում է «կոնյուկտուրային պարբերաշրջանների սինխրոնավորման» մեջ:

Կոնյուկտուրային պարբերաշրջանների սինխրոնավորում ասելով, ժամանակակից տնտեսագիտական տեսության մեջ հասկացվում է.

- հասարակական արդյունքի ծավալի զուգահեռ տատանումներ տարբեր երկրներում և երկրների խմբերում (հասարակական արդյունքի ծավալի համեմատական տատանումներ զարգացած և զարգացող երկրներում)² համաձայն գծանկար 1-ի³,

- տնտեսական ակտիվության այլ ցուցանիշների (սպառում, արտահանում/ներմուծում, ներդրումներ, ծախսեր և խնայողություններ, աշխատավարձ, գործազրկության մակարդակ և այլն) համատեղ տատանումներ տարբեր երկրներում և երկրների խմբերում⁴:



Գծանկար 1. Կոնյուկտուրայի տատանումների սինխրոնավորումը զարգացած և զարգացող երկրներում, %-ներով⁴

Ժամանակակից տնտեսագիտությունը հաստատում է համաշխարհային տնտեսության մեջ կոնյուկտուրային տատանումների սինխրոնավորման էմպիրիկ, փաստացի առկայությունը, միաժամանակ ապացուցելով դրանց բարդ կառուցվածքն ու բազմամակարդակ բնույթը⁵: Ապացուցված էմպիրիկ փաստի առկայությունը բարձրացնում է տարբեր երկրների իմանենտ համաձայնեցվածության մեխանիզմի և նման համաձայնեցվածության ազդեցության ու կարգավորման հնարավորությունների հարցը:

Առանձնացվում են միջազգային կոնյուկտուրայի երկու հիմնական կոմպոնենտներ.

- ընդհանուր,
- հատուկ երկրային (կամ խմբային)⁶:

Առաջինն արտացոլում է ամբողջ համաշխարհային տնտեսության կոնյուկտուրային տատանումների ընդհանուր բնույթը (օրինակ՝ 1970-ական թթ. ճգնաժամը): Հատուկ երկրային կոմպոնենտը ցույց է տալիս մեկ երկրում (երկրների խմբում) կոնյուկտուրայի տատանումների ազդեցությունը մեկ այլ երկրում (երկրների խմբում) կոնյուկտուրայի տատանումների վրա:

Գծանկար 2-ում ներկայացված են ընդհանուր և հատուկ երկրային կոմպոնենտների հարաբերակցությունը Ռ-ում, ՀՀ-ում և համաշխարհային տնտեսության մեջ իրական ՀՆԱ-ի տատանումների համեմատական վերլուծության օրինակով⁷: Այսպես, 1992-1997թթ. ժամանակաշրջանը բնութագրվում է Հայաստանի և Ռուսաստանի կոնյուկտուրայի տատանումներում հատուկ երկրային կոմպոնենտի գերակշռությամբ: Սակայն, սկսած 2000թ., սկսում է գերակշռել ընդհանուր կոմպոնենտը, որն արտացոլվում է իրական ՀՆԱ-ի տատանումների զուգահեռությամբ՝ ինչպես համաշխարհային տնտեսության մեջ, այնպես էլ՝ Հայաստանում և Ռուսաստանում:

¹ Kydland F. Business Cycles: Real Facts and a Monetary Myth / F. Kydland, E. Prescott // Quarterly Review of Federal Reserve Bank of Minneapolis, 1990, Vol. 14, N2, P. -18.

² Global Financial Stability Report. Market Developments and Issues // World Economic and Financial Survey. International Monetary Fund, 2005, Sept, P. 39-43.


³ Global Financial Stability Report. Market Developments and Issues // World Economic and Financial Survey. International Monetary Fund, 2005, Sept, P. 44-45.

⁴ Global Financial Stability Report. Market Developments and Issues // World Economic and Financial Survey. International Monetary Fund, 2005, Sept, էջ P. 43.

⁵ Schmitt-Grohe S. The International Transmission of Economic Fluctuations // Journal International Economics, 1998, Vol. 44, N2, P. 279-280.

⁶ Schmitt-Grohe S. The International Transmission of Economic Fluctuations // Journal International Economics, 1998, Vol. 44, N2, P. 261.


⁷ Global Financial Stability Report. Market Developments and Issues // World Economic and Financial Survey. International Monetary Fund, 2005, Sept, P. 162.



Գծանկար 2. Միջազգային կոնյուկտուրայի երկրների ընդհանուր և առանձնահատուկ կոմպոնենտների հարաբերակցությունը, %-ներով¹

Միջազգային կոնյուկտուրան դիտարկվում է ոչ միայն նրա կառուցվածքի տեսանկյունից, այլև երկրների ու երկրների խմբերի, ինչպես նաև համաշխարհային տնտեսության շրջանակներում նրանց դինամիկան և տարածվածությունը կանխորոշող գործոնների տեսանկյունից: Ինչպես արդեն նշվել է, սինխրոնավորման գործընթացի ուժեղացմանը նպաստող հիմնական գործոնը համարվում է ինտեգրումը, ընդ որում, այն բաժանվում է երկու կոմպոնենտի՝ ֆինանսական ինտեգրման և ապրանքների ու ծառայությունների շուկաների ինտեգրման²:

Գործոնների և նրանց ազդեցության ընդհանուր համակարգը, որը և ձևավորում է միջազգային կոնյուկտուրան, ներկայացված է գծանկար 3-ում, որոնք մշակված են զարգացած և զարգացող երկրներում կոնյուկտուրայի ձևավորման էմպիրիկ վերլուծության հիման վրա³:



Գծանկար 3. Միջազգային կոնյուկտուրայի գործոնների ներդաշնակեցման ձևավորման փոխկապվածությունը և մեխանիզմը⁴

* «+» նշանը ցույց է տալիս էմպիրիկ կերպով ապացուցված դրական ազդեցությունը, «-» նշանը՝ բացասական ազդեցությունը, «0» նշանը՝ ազդեցության բացակայությունը կամ էմպիրիկ կերպով ապացուցված չլինելը:

Սինխրոնավորման էմպիրիկ կերպով ապացուցված հիմնական գործոնները համարվում են առևտրային և ֆինանսական ինտեգրման գործոնները⁵: Միևնույն ժամանակ, մասնագիտացումը բացասաբար է անդրադառնում սինխրոնավորման վրա: Բաց տնտեսության մեջ կոնյուկտուրայի սինխրոնավորման համար տվյալ գործոնների հարաբերական մեծությունները ներկայացված են աղյուսակ 1-ում:

Սինխրոնավորման համար առավել մեծ նշանակություն ունեն հետևյալ պարամետրերը. մասնագիտացումը (սինխրոնավորման վրա զգալի բացասական ազդեցություն. ռեգրեսիոն գործակիցը՝ - 0,343) և միջազգային ֆինանսական շուկայի ինտեգրումը, որը դրական է ազդում սինխրոնավորման վրա (ռեգրեսիայի գործակիցը՝ +0,011 և +0,022):

¹ Global Financial Stability Report. Market Developments and Issues // World Economic and Financial Survey. International Monetary Fund, 2005, Sept, P. 62.

² Imbs J. Trade, Finance, Specilization and Sinchronization // International Monetary Fund Working Paper. 200, WP/0/81. P. 9.

³ Imbs J. Trade, Finance, Specilization and Sinchronization // International Monetary Fund Working Paper. 200, WP/0/81.

⁴ Schmitt-Grohe S. The International Transmission of Economic Fiuctuations // Journal International Economics, 1998, Vol. 44, N2, P. 38.

⁵ Imbs J. Trado, Finance, Specilization and Sinchronization // International Monetary Fund Working Paper. 200, WP/0/81, P. 30.

Միջխրոնավորման գործոնների հավասարակշռման (հավասարեցման) ռեգրեսիոն գնահատականը¹

Երկրների կոնյուկտուրայի փոխկապվածության «ալիքները» համաշխարհային տնտեսության շրջանակներում*	Ուղղակի էֆֆեկտ սինխրոնավորման վրա**	Անուղղակի էֆֆեկտ սինխրոնավորման վրա**
1. Միջազգային առևտուր • ներդրողային առևտուր • միջնորդային առևտուր • առևտուր մասնագիտացման միջոցով	-0,108 (0,008) 0,105 (0,000)	0,024 (0,024)
2. Մասնագիտացում • միջազգային առևտրով պայմանավորված մասնագիտացում • միջազգային ֆինանսական շուկաների ինտեգրմամբ պայմանավորված մասնագիտացում • դիվեսիֆիկացում • ասյրանքային շուկաների ինտեգրմամբ պայմանավորված մասնագիտացում	0,024 (0,024) 0,022 (0,06) -0,343 (2,72)	-0,108 (0,008)
3. Միջազգային ֆինանսական ինտեգրում • կապիտալի շարժի միջոցով • մասնագիտացման միջոցով	0,011 (0,727)	0,022 (0,06)

* Տվյալ գործոնների պարամետրերի հաշվարկները հիմնված են 102 երկրների տվյալների վրա՝ 1970-2002 թթ. ժամանակաշրջանի համար:

** Ուեգրեսիայի գործակից (փակագծերում)՝ ստանդարտ սխալը:

Միջազգային կոնյուկտուրայի վերաբերյալ ժամանակակից մի շարք հետազոտություններում հատուկ ուշադրություն է դարձվում կոնյուկտուրային պարբերաշրջանների սինխրոնավորման վրա տարբեր երկրների աշխատուժի շուկաների ինտեգրման մեխանիզմի ազդեցությանը²:

Ինչպես ցույց է տալիս էմպիրիկ հետազոտությունների մեծ մասը, տվյալ մեխանիզմը միջազգային կոնյուկտուրայի և ազգային տնտեսության կոնյուկտուրայի ձևավորման առանձնահատկությունների վրա ազդում է ոչ թե աշխատուժի ուղղակի տեղաշարժի (միգրացիայի) միջոցով, այլ՝ միջնորդավորված, համագործակցող երկրների աշխատուժի շուկաների առաջարկի և պահանջարկի համաձայնեցման մեխանիզմի միջոցով³: այսպես, ՏՀԶԿ երկրների տնտեսական ակտիվության հիմնական ցուցանիշների դինամիկայի ուսումնասիրման հիման վրա ցույց է տրվում, որ ազգային տնտեսություններում կոնյուկտուրային վերելքն ուղեկցվում է աշխատատար ապրանքների հարաբերական գների աճով և, միաժամանակ, ֆոնդատար ապրանքների հարաբերական գների նվազմամբ: Որպես հետևանք, աճում է աշխատուժի պահանջարկը ոչ միայն առանձին վերցրած երկրի տնտեսությունում, այլև՝ փոխկապակցված մյուս բոլոր երկրների տնտեսություններում: Սա հանգեցնում է աշխատավարձերի, զբաղվածության և արտադրության ծավալների համաձայնեցված աճին երկրների տվյալ խմբում, դրանով իսկ ապահովելով հետագա տնտեսական աճը և կոնյուկտուրայի սինխրոնավորման ընթացքը տարբեր երկրներում⁴:

Բացի դրանից, եկամտի հարաբերական աճը բերում է սպառման աճին, որը, համաձայն ԱՄՆ-ի կողմից 2003թ. կատարված հետազոտության, համարվում է կոնյուկտուրային պարբերաշրջանների տնտեսական աշխուժացման փուլի հիմնական գործոնը⁵:

Նմանատիպ եզրահանգումները հաստատվում են նաև արդյունաբերության մեջ զբաղվածության և աշխատավարձերի տատանումների փոխկապվածության էկոնոմետրիկական վերլուծությամբ՝ ՏՀԶԿ տարբեր երկրներում (տե՛ս աղյուսակ 2):

Այսպիսով, կոնյուկտուրայի վրա աշխատանքի շուկայի ազդեցությունն իրականացվում է հիմնականում միջնորդավորված՝ գնագոյացման և երկրների միջև ապրանքների ու ծառայությունների շարժի մեխանիզմի, ինչպես նաև աշխատանքի արտադրողականության աճի ձևավորման մեխանիզմների միջոցով: Միևնույն ժամանակ, ժամանակակից տնտեսության մեջ հարկ է հաշվի առնել նաև աուտոսուսինգի պայմանագրերի կնքման միջոցով աշխատուժի հոսքերի «թաքնված» շարժի ազդեցությունը միջազգային կոնյուկտուրայի վրա: Աուտոսուսինգի ծավալի աճի գլոբալ միտումը, որը նկատվում է վերջին տասնամյակում, հանգեցնում է աշխատուժի համաշխարհային շուկայում առաջարկի ու պահանջարկի հաշվեկշռվածության փոփոխմանը, աշխատավարձի գլոբալ իջեցմանը և, որպես հետևանք՝ կոնյուկտուրային տատանումների սինխրոնավորմանը զարգացած և զարգացող երկրներում⁶:

¹ Imbs J. Trade, Finance, Specilization and Synchronisation // International Monetary Fund Working Paper. 200, WP/0/81, P. 39.

² Kraay A. Comparative Advantage and the Cross Section of Business Cycles / A. Kraay, J.Ventura // National Bureau of Economic Research Working Paper. 2001, N8104.

³ Kraay A. Comparative Advantage and the Cross Section of Business Cycles / A. Kraay, J.Ventura // National Bureau of Economic Research Working Paper. 2001, N8104, P. 12.

⁴ Kraay A. Comparative Advantage and the Cross Section of Business Cycles / A. Kraay, J.Ventura // National Bureau of Economic Research Working Paper. 2001, N8104, P. 27.

⁵ Global Financial Stability Report. Market Developments and Issues // World Economic and Financial Survey. International Monetary Fund, 2005, Sept, P. 47.

⁶ Kraay A. Comparative Advantage and the Cross Section of Business Cycles / A. Kraay, J.Ventura // National Bureau of Economic Research Working Paper. 2001, N8104, P. 7.

Աշխատանքի շուկաների փոխկապվածությունը համաշխարհային տնտեսությունում¹

Երկիրը	Ջրադրվածության և իրական ՀՆԱ-ի հավելածի տեմպերի կոռելյացիայի գործակից	Աշխատավարձի և իրական ՀՆԱ-ի հավելածի տեմպերի կոռելյացիայի գործակից
Կանադա	0,61	0,16
Ֆրանսիա	0,44	0,07
Գերմանիա	0,40	0,41
Իտալիա	0,31	0,14
Ճապոնիա	0,39	0,33
Մեծ Բրիտանիա	0,58	-0,11
ԱՄՆ	0,49	0,31
Բելգիա	0,44	0,32
Դանիա	0,57	0,23
Հոլանդիա	0,33	0,44
Նորվեգիա	0,17	0,27

Բաց տնտեսության կոնյուկտուրան որոշվում է ոչ միայն միջազգային կոնյուկտուրայով՝ վերջինիս բոլոր արտացոլումներով։ Հարկավոր է հաշվի առնել նաև սեփական, ներքին, հատուկ-երկրային կոնյուկտուրաները։ Կոնյուկտուրաների փոխադարձ կապը տեղի է ունենում միջազգային կոնյուկտուրայի տրանսմիսիայի «խողովակներով»։ Երկրների միջև ապրանքների և ծառայությունների շարժի (արտաքին առևտրային հատված), կապիտալի և աշխատուժի շարժի, ինչպես նաև աշխատանքի միջազգային շուկայի միջոցով։

Բաց տնտեսության պայմաններում վերը նշված արտաքին տնտեսական հատվածները ամփոփականորեն կապված են ներտնտեսական հատվածների հետ, ինչպես դիմամիկրոն, այնպես էլ՝ կառուցվածքով։ Օրինակ, միջազգային կոնյուկտուրայի ազդեցությունը բաց տնտեսության կոնյուկտուրայի վրա կարող է կախված լինել ոչ միայն տնտեսության բացությունից և կապիտալի շարժի առանձնահատկություններից, այլև՝ գույս ներքին ճյուղային կառուցվածքից, տնտեսության ինստիտուցիոնալ կառուցվածքից, աշխատանքի շուկայի կարգավորման առանձնահատկություններից²։

Որպես հետևանք՝ բաց տնտեսության վրա միջազգային կոնյուկտուրայի տրանսմիսիայի մեխանիզմի կառուցվածքը և երկրների միջև ապրանքների, ծառայությունների, կապիտալի և աշխատուժի հոսքերի դերը կարելի է ներկայացնել հետևյալ աղյուսակի տեսքով (տես աղյուսակ 3)։

Աղյուսակ 3

Բաց տնտեսության վրա միջազգային կոնյուկտուրայի տրանսմիսիայի մեխանիզմի կառուցվածքը

Միջազգային կոնյուկտուրայի տրանսմիսիայի ուղիները	Չափանիշները, որոնք բնութագրում են բաց տնտեսության վրա միջազգային կոնյուկտուրայի ազդեցության աստիճանը	Ազգային տնտեսության վրա միջազգային կոնյուկտուրայի ազդեցության բնույթը	Չափանիշների կարգավորման գործիքները
Ապրանքների և ծառայությունների արտահանումը և ներմուծումը	Ներմուծման սահմանային հակվածությունը	Միջազգային տատանումների ազդեցությունը ներմուծմանը փոխարինող և արտահանմանն ուղղվածության տնտեսության հատվածների վրա	Մաքսասակագնային կարգավորումը/ներմուծման մաքսադրույքներ, քվոտաներ, ներմուծման սահմանափակման այլ գործիքները/
	Արտահանման/ներմուծման աշխարհագրական և ապրանքային կառուցվածքը	Որոշակի տարածաշրջանի/երկրի/ տատանման ազդեցությունը ազգային տնտեսության տնտեսական ակտիվության վրա	Պետության արտաքին տնտեսական քաղաքականությունը/երկրորդ համաձայնություններ, ինտեգրման խմբավորումներում անդամակցումը, արտահանման քաղաքականությունը, ազգային անվտանգության քաղաքականությունը և այլն/
	Արտահանման/ներմուծման գնագոյացման առանձնահատկությունները՝ արժույթային փոխարժեքի ռեժիմը	Ներմուծվող հումքի, արտահանման ապրանքների/օրինակ, ներդրում այն/ նկատմամբ պահանջարկի փոփոխության ձևով կոնյուկտուրայի միջազգային տատանումների ազդեցությունը ազգային տնտեսության վրա	Արտաքին առևտրային քաղաքականությունը ուղղված ապրանքների տարբեր խմբերը, ներքին արդյունաբերական քաղաքականությունը և այլ գործիքներ

1 Kraay A. Comparative Advantage and the Cross Section of Business Cycles / A. Kraay, J. Ventura // National Bureau of Economic Research Working Paper. 2001, N8104, P. 49.

2 Schmitt-Grohe S. The International Transmission of Economic Fluctuations // Journal International Economics, 1998, Vol. 44, N2, P. 260

Միջազգային կոնյուկտուրայի տրանսմիսիայի աղիները	Չափանիշները, որոնք բնութագրում են բաց տնտեսության վրա միջազգային կոնյուկտուրայի ազդեցության աստիճանը	Ազգային տնտեսության վրա միջազգային կոնյուկտուրայի ազդեցության բնույթը	Չափանիշների կարգավորման գործիքները
Կապիտալի շարժ	Կապիտալի շարժունակությունը	Կապիտալի կարճաժամկետ և միջին ժամկետի հոսքերի ազդեցությունը	Դրամավարկային քաղաքականությունը /տոկոսադրույքի /կարգավորումը և կապիտալի արտահանման, ներմուծման առանձնահատկությունները
	Կապիտալի շուկայի բացությունը	Երկարաժամկետ կապիտալի և ներդրումների հոսքերի ազդեցությունը	Օտարերկրյա Ներդրումների ներգրավման քաղաքականությունը
	Արժույթային փոխարժեքի ռեժիմը	Փոխատվական կապիտալի հոսքերի ազդեցությունը	Դրամավարկային քաղաքականություն
Աշխատուժի միգրացիա	Հասարակության ժողովրդագրական կառուցվածքը /բնակչության բարեկեցության հարաբերական մակարդակը/	Աշխատուժի արտահոսքի և ներհոսքի ազդեցությունը աշխատանքի շուկայի առաջարկի և պահանջարկի հաշվեկշռի, աշխատավարձի, գների և զբաղվածության վրա	Ազգային միգրացիոն քաղաքականությունը, արտասահմանից հարկերի հարկման քաղաքականությունը, միգրացիայի միջազգային կարգավորումը
	Տնտեսության բացության մակարդակը աշխատուժի տեղաշարժի նկատմամբ	Ազգային տնտեսության վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշիվների միջոցով տրանսերտների ազդեցությունը տնտեսական ակտիվության և եկամտի տատանման վրա	

Այսպիսով, բաց տնտեսության կոնյուկտուրայի ինտեգրված մոդելի կառուցման տեսա-մեթոդաբանական սկզբունք կարող է համարվել կառուցվածքային հարաբերությունների եռատարր համակարգը, որը բնորոշվում է.

- փոքր բաց տնտեսության կոնյուկտուրայի տատանումների աղբյուրներով, (որոնք կարող են լինել ինչպես ներքին, այնպես էլ՝ արտաքին), ինչպես նաև պահանջարկի և/կամ առաջարկի շուկերով,
- բաց տնտեսության վրա այդ տատանումների տրանսմիսիայի մեխանիզմներով, գերազանցապես միջազգային տրանսմիսիայի կողմից, ապրանքների և ծառայությունների միջազգային շուկայի, միջազգային ֆինանսական շուկայի և աշխատանքի միջազգային շուկայի միջոցով,
- միջազգային կոնյուկտուրայի տատանումների և բաց տնտեսության ներքին շուկերի տարածման, ինչպես նաև ուժգնացման/թուլացման էնդոգեն մեխանիզմներով:

ՆԵՐՍԵՍ ԿՈՌԵԼԱՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ. Քոբանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի ասպիրանտ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԱՐԵԹՈՒՆԳԻ ԱՌԱՆՁՆԱՅԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Միջազգային մարքեթինգը արտադրական միջավայրի սուբյեկտների գործունեության կազմակերպման համակարգ է, որը աջակցում է արտադրական նպատակների և օտարերկրյա սպառողների ընթացիկ պահանջմունքների գործառնության կապին: Այն նաև նպաստում է տնտեսական կյանքի միջազգայնացմանը բոլոր ոլորտներում:

Միջազգային մարքեթինգի շնորհիվ հնարավոր է հասնել ձեռնարկատիրական գործունեության օպտիմալ ցուցանիշների: Այլ կերպ ասած միջազգային մարքեթինգը կարևոր պայման է միջազգային մասշտաբների առաջարկի և պահանջարկի միջև գործուն հակադարձ կապի հաստատման համար: Այն նաև հանդես է գալիս, որպես ինքնատիպ երաշխավոր այն փաստին, որ արտադրված ապրանքը, անցնելով արտադրական գործընթացի բոլոր փուլերը, արտերկրում կգտնի իր վերջնական սպառողին:

Միջազգային մարքեթինգը վերաբերվում է նաև միջազգային կազմակերպության իրականացրած գործունեությանը, իսկ միջազգային կազմակերպությունների տարբերակիչ առանձնահատկություններից են՝

- նախապես որոշված օտարերկրյա շուկաներում որոշակի ապրանքների արտադրությանը կամ մայր ձեռնարկություններին հումքային ռեսուրսներով ապահովելուն կողմնորոշված դուստր ձեռնարկությունների և արտադրական մասնաճյուղերի ցանցի առկայությունը,
- տեխնոլոգիական կրկնօրինակման կիրառումը,
- մասնաճյուղերի և դուստր ձեռնարկությունների վերահսկողությունը և կոորդինացումը մեկ ընդհանուր կենտրոնից՝ հաշվի առնելով դրանց իրավական կարգավիճակների տարբերությունը: